

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
1998 թվականի թիվ 821 որոշման մեջ
փոփոխություններ և լրացումներ կատարելու
մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

ԼԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

----- 2022 թվականի

N ----Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի 821 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» 821 որոշմամբ (այսուհետև՝ Որոշում) հաստատված կանոնադրության (այսուհետև՝ Կանոնադրություն) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- Կանոնադրության 1-ին կետի 6-րդ պարբերության 3-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդ որում, մինչև 16 տարեկան, ինչպես նաև 16 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին անձնագրերը տրամադրվում են մինչև նրանց 19 տարին լրանալը, իսկ 19 տարին լրացած լինելու դեպքում՝ «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով տրված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման կամ «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կամ 8-րդ մասով կամ 29-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված բժշկական վերափորձաքննության ժամկետով: Պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարի միջնորդությամբ 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին

անձնագիր կարող է տրամադրվել նաև այլ ժամկետով՝ ուսման, բուժման, մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցելու նպատակով:»,

- Կանոնադրության 5-րդ կետի «բ» ենթակետը «ճննդյան վայրը» բառերից հետո լրացնել «(պետությունը կամ անձի ցանկությամբ մարզը կամ շրջանը կամ քաղաքը կամ ավանը կամ գյուղը՝ ճննդյան վկայականում համապատասխան նշումների առկայության դեպքում)» բառերով,
- Կանոնադրության 11-րդ կետի «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «գ) Նախագորակոչային տարիքի քաղաքացիների դեպքում՝ նախագորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկ, գորակոչային տարիքի և պարտադիր զինվորական ծառայության գորակոչից օրենքով սահմանված կարգով տարկետում ստացած քաղաքացիների դեպքում՝ գորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկ, պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության գորակոչված, ինչպես նաև պահեստազորում հաշվառված քաղաքացիների դեպքում՝ զինվորական գրքույկ կամ զինվորական հաշվառման փաստը հավաստող տեղեկանք»,
- Կանոնադրության 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«14. Անձնագիրը փոխանակելու համար քաղաքացին ներկայացնում է՝

1) դիմում.

2) փոխանակման ենթակա անձնագիրը.

3) 35 x 45 մմ չափսի երկու լուսանկար (գունավոր).

4) նախագորակոչային տարիքի քաղաքացիների դեպքում՝ նախագորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկ, գորակոչային տարիքի և պարտադիր զինվորական ծառայության գորակոչից օրենքով սահմանված կարգով տարկետում ստացած քաղաքացիների դեպքում՝ գորակոչային տարիքի քաղաքացու զինվորական հաշվառման գրքույկ, պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության գորակոչված, ինչպես նաև պահեստազորում հաշվառված քաղաքացիների դեպքում՝ զինվորական գրքույկ կամ զինվորական հաշվառման փաստը հավաստող տեղեկանք.

5) Անձնագրում որևէ տեղեկություն փոխելու կամ գրառումներում անճշտություններ հայտնաբերելու դեպքում՝ նաև իրավասու մարմնի կողմից տրված փոփոխությունը կամ անճշտությունը հավաստող փաստաթուղթ.

6) պետական տուրքի վճարման անդորրագիր:

Նոր անձնագիրը տրամադրվում է հին անձնագիրը վերցնելուց հետո: Քաղաքացու ցանկությամբ հին անձնագիրը վերադարձվում է դակելուց հետո՝ բացառությամբ կեղծված կամ օրենսդրության խախտմամբ ձեռք բերված անձնագրերի: Քաղաքացուն չվերադարձված կամ անձնագրային ծառայությունում գտնվող՝ օգտագործման համար ոչ պիտանի, անվավեր, սխալ

տրված, խոտանված կամ օրենքով սահմանված այլ դեպքերում և կարգով անձնագրային ծառայություն վերադարձված անձնագրերի ոչնչացման կարգը սահմանում է ոստիկանության ոլորտում լիազոր պետական կառավարման մարմնի ղեկավարը:»,

5) Կանոնադրության 19-րդ կետում «Ժամկետային» բառերը փոխարինել «պարտադիր» բառերով:

2. Սույնորոշումնուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

« » _____ 2022թ.

ք. Երևան